



# COVID-19

## Փաստեր Պատվաստման Մասին

### ԻՆՉՈՒՐ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ



- Պատվաստումը նվազեցնում է COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Այն նաև նվազեցնում է երկարատև COVID-19-ով վարակվելու վտանգը ձեզ համար:
- Դուք պետք է ստանաք **բոլոր առաջարկվող դեղաչափերը** (ներառյալ խթանիչ դեղաչափերը)՝ լավագույն պաշտպանություն ստանալու համար:

### ՈՎԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ



#### 5 տարեկան և ավելի բարձր տարիքի ցանկացած անձ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվճար են** բոլորի համար, անգամ եթե չունեն ապահովագրություն:
- Ձեզնից չեն հարցնելու ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Պատվաստանյութերը խորհուրդ են տրվում բոլոր անձանց, ներառյալ հղի կամ կրծքով կերակրող, ինչպես նաև COVID-19-ով վարակված անձանց:
- Ալերգիա ունեցող մարդկանց մեծ մասը կարող է պատվաստվել:

## COVID-19-Ի ԴԵՄ ՈՐ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏՐԿՈՒՄ


	Pfizer	Moderna
Խորհուրդ է Տրվում	5+ Տարեկան	18+ Տարեկան
Հիմնական Շարք`	2 դեղաչափ` 3-8 շաբաթ ընդմիջումով	2 դեղաչափ` 4-8 շաբաթ ընդմիջումով
#1 Խթանիչ	5 ամիս անց	5 ամիս անց
#2 Խթանիչ	50+ տարեկան` 4 ամիս անց	50+ Տարեկան` 4 ամիս անց



Եթե ունեք **խոնկային անբավարարություն, հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինեն լրացուցիչ դեղաչափեր**. Խոսք ձեր բժշկի հետ կամ այցելեք [ph.lacounty.gov/covidvaccineschedules](https://ph.lacounty.gov/covidvaccineschedules)՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

**Որոշ իրավիճակներում** Johnson & Johnson պատվաստանյութը կարող է օգտագործվել 18+ տարեկան անձանց համար: Այն տրվում է որպես մեկ դեղաչափ` ավելացնելով խթանիչ դեղաչափ (3 պատվաստանյութերից որևէ մեկը) 2 ամիս անց: Բացի այդ, 50+ անձինք կամ 18+ տարեկան անձինք, որոնք ստացել են J&J պատվաստանյութի 2 դեղաչափ, կարող են ստանալ Pfizer կամ Moderna պատվաստանյութի 2-րդ խթանիչ դեղաչափ:

COVID-19 Vaccination Record Card			
Last name		First Name	
Date of Birth		Medical Record Number	
Vaccine	Product/Lot #	Date	Clinic Site
1st Dose COVID-19		__/__/__	
2nd Dose COVID-19		__/__/__	
3rd Dose COVID-19		__/__/__	





# COVID-19


# Փաստեր Պատվաստման Մասին

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Լուս Անջելեսի Շրջանում կան պատվաստման հարյուրավոր վայրեր. շատերը բաց են հանգստյան օրերին և երեկոյան ժամերին և չեն պահանջում ժամադրություն:

Ձեր տարածաշրջանում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կայքէջ կամ զանգահարեք **833-540-0473** հեռախոսահամարով՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը:
- Կարող եք նաև զանգահարել 2-1-1 կամ հարցնել ձեր բժշկին կամ տեղային դեղագործին:
- Գործում են նաև անվճար փոխադրման և տնային պատվաստման ծառայություններ:



Անչափահաս անձանց պատվաստման համար պահանջվում է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:

## ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատվաստումների հետևանքով առաջացող կողմնակի ազդեցությունները կրում են սովորական բնույթ և կարող են ներառել թևի ցավ կամ կարմրություն, հոգևածության զգացողություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Դրանց դրսևորումը չի նշանակում, որ դուք վարակված եք COVID-19-ով: Ոչ բոլորի մոտ են առաջանում կողմնակի ազդեցություններ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:** Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են և հիմնականում՝ բուժելի:



## Ի՛ՆՉ ԿԱՍԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19 հարուցիչ վիրուսը:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի տարբեր գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք **անվտանգ են և արդյունավետ:**
- 2020 թվականի դեկտեմբերից սկսած **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են ենթարկվել ԱՄՆ պատմության մեջ **անվտանգության ամենաուժեղ հսկողությանը:**
- Չկան ապացույցներ, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են պտղաբերության հետ կապված խնդիրներ: Պատվաստանյութերն անվտանգ են հղի անձանց համար և խորհուրդ են տրվում հղիության մասնագետների կողմից:

